ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (WWW.ARMED.AM) ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
No. 2020-0474

Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվում է հետևյալ կողմերի միջև.

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ (այսուհետ՝ **Օպերատոր**)

Պետ. գրանցման համարը	**264.120.971995**
Պետ. գրանցման ամսաթիվը	**29.08.2017**
Գտնվելու վայրը	**ՀՀ, 0014 Երևան, Հր Ներսիսյան 14/1, 1/2**
Ի դեմս	**տնօրեն Ավետ Մանուկյանի**
Բանկային տվյալներ	**«Ամերիա բանկ» ՓԲԸ, 1570026900460100**
ՀՎՀՀ	**00169899**
Կոնտակտային էլ. փոստի հասցե	**support@armed.am**
Կոնտակտային հեռախոսահամար	**+37411-20-20-33**

Պետական առողջապահական գործակալություն(այսուհետ՝ **Բաժանորդ**)
իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ անվանումը

Գտնվելու վայրը	Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 10
Ի դեմս */նշել պաշտոնը և անունը/*	Պետ՝Ծաղիկ Վարդանյան
ՀՎՀՀ	02507171
Բաժանորդի օգտագործողների ադմինիստրատորների անուն, ազգանուն, հայրանուն և էլ. փոստի հասցե	Ծաղիկ Վարդանյան 7308690342 Լուսինե Ենգիբարյան 7804720386 info@moh.am, ts.sargsyan@moh.am,

համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ **Կողմեր**:

- Հիմք ընդունելով «Էլեկտրոնային առողջապահության համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու համար անցկացված մրցույթի արդյունքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20 հուլիսի 2017 թվականի N 866-Ն որոշման պահանջները, որի համաձայն մրցույթի հաղթողի կողմից կոնցեսիայի պայմանագրի դրույթների համաձայն հիմնադրված Օպերատորը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է որպես էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգի կառավարման միասնական օպերատոր և որը հիմնադրման պահից երրորդ անձանց առջև գործում է կոնցեսիայի պայմանագրով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում,

4232

Կողմերը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժանորդի օգտագործող կամ **Օգտագործող՝** Բաժանորդի անձնակազմի անդամն է, որն իր մասնագիտական լիազորություններից ելնելով և աշխատանքային պարտականությունների կատարման նպատակով Բաժանորդի ադմինիստրատորի կողմից Համակարգում ստացել է որոշակի իրավասություններ (դեր) և որպես մասնագիտական կամ աշխատանքային գործիք օգտագործում է Համակարգը՝ Օպերատորի կողմից սահմանված տեխնիկական պահանջների բավարարմամբ և Լիազոր մարմնի կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն: Պայմանագրի իմաստով Բաժանորդի օգտագործող է համարվում նաև Բաժանորդի օգտագործողների ադմինիստրատորը:

Էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգ կամ **Համակարգ՝** տեղեկատվության և ենթակառուցվածքների ամբողջություն, որն ապահովում է յուրաքանչյուր մարդու վերաբերյալ բժշկական տվյալների մուտքագրումը, մշակումը, պահպանումը, արխիվացումը և օգտագործումը էլեկտրոնային միջավայրում:

Լիազոր մարմին՝ ՀՀ առողջապահության նախարարություն կամ ՀՀ կառավարության կողմից հետագայում սահմանված մեկ այլ մարմին:

Կոնցեսիայի պայմանագիր՝ ՀՀ կառավարության և Օպերատորի միջև 01.09.2017 թվականին կնքված «Էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական միասնական համակարգի օպերատոր հիմնադրելու եղանակով որոշակի ծրագրային փաթեթ, շարժական գույք և այդ տեղեկատվական համակարգի սպասարկման իրավունքներ փոխանցելու կոնցեսիայի պայմանագիր», որի պահանջներին համապատասխան մատուցվում են սույն բաժանորդային պայմանագրով սահմանված ծառայությունները:

Շահառու՝ Համակարգից ոչ մասնագիտական նպատակներով օգտվող, անձնական էջ ունեցող ֆիզիկական անձ:

Սակագներ՝ սույն բաժանորդային պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ գործող, ինչպես նաև հետագայում Կոնսեցիայի պայմանագրի համաձայն վերանայված և սահմանված՝ ծառայությունների մատուցման համար Բաժանորդներից գանձման ենթակա վճարների չափեր, որոնք հրապարակվում են www.armed.am ինտերնետային կայքում:

Սպասարկման տարածք՝ ՀՀ ողջ տարածքը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Սույն բաժանորդային պայմանագրի շրջանակներում Օպերատորը Բաժանորդին տրամադրում է համացանցի www.armed.am դոմենային տիրույթում գործող պորտալի միջոցով ՀՀ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգին միանալու տեխնիկական հնարավորություն և մատուցում է Համակարգի ծրագրային ապահովման (այսուհետ՝ **Ծրագրային ապահովում**) սպասարկման ծառայություններ (այսուհետ՝ **Ծառայություններ**)՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված՝ ծառայությունների նկարագրության, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրանց դիմաց՝ համաձայն Պայմանագրի:

3. ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Օպերատորը երաշխավորում և պարտավորվում է, որ

3.1.1 Ծրագրային ապահովումը կունենա Կոնցեսիայի պայմանագրով սահմանված հասանելիություն և տեխնիկական խնդիրների վերացման ընթացակարգ,

3.1.2 Ծրագրային ապահովման էական փոփոխությունների մասին Բաժանորդը կծանուցվի,

3.1.3 կգործադրի ողջամիտ ջանքեր, որպեսզի Ծրագրային ապահովումը չունենա որևէ զգալի թերություն, անսարքություն կամ այլ խնդիր,
3.1.4 ունի համապատասխան լիցենզիա՝ ամբողջական և անսահմանափակ իրավունք՝ Ծրագրային ապահովումը օգտագործելու և օգտագործման տրամադրելու Բաժանորդին, և բացառությամբ Պայմանագրով սահմանված պայմանների, հնարավորություն կտա Բաժանորդին օգտագործել այն ազատորեն՝ առանց որևէ խոչընդոտի, հավելյալ ծանրաբեռնումների կամ պահանջների,
3.1.5 Ծառայությունները կմատուցի ժամանակին, պատշաճ կարգով, բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն Պայմանագրի դրույթների,
3.1.6 ունի համապատասխան ռեսուրսներ և անձնակազմ Ծառայությունները սահմանված կարգով մատուցելու համար:

4. ԲԱԺԱՆՈՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Բաժանորդը երաշխավորում և պարտավորվում է, որ
4.1.1 Ծրագրային ապահովումը օգտագործելու է բացառապես Պայմանագրին և ՀՀ օրենսդրությանը, ներառյալ՝ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը համապատասխան՝ իր կողմից մատուցվող ծառայություններից օգտվող կամ այլ կերպ սպասարկվող Շահառուի անձնական տվյալները հավաքելու, մուտքագրելու կամ այլ եղանակով մշակելու, Ծրագրային ապահովման մեջ Շահառուի անձնական տվյալների դարան մուտք գործելու և արտոնված այլ գործողություններ կատարելու նպատակով՝ օրենքով սահմանված դեպքերում կամ Շահառուի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի համաձայնությամբ,
4.1.2 Ծրագրային ապահովումը օգտագործելու է բացառապես Օպերատորի կողմից մշակված և www.armed.am ինտերնետային կայքում հրապարակված ուղեցույցներին և Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի պահանջներին համապատասխան,
4.1.3 ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցներ իր անձնակազմի և երրորդ անձանց անօրինական մուտքը Ծրագրային ապահովում կամ Շահառուների անձնական տվյալների դարան կանխելու համար,
4.1.4 ապահովելու է հեռահաղորդակցության կապուղիների և իր Օգտագործողների մոտ համակարգչային սարքավորումների առկայությունը և անխափան աշխատանքը, որպեսզի Օգտագործողները կարողանան մուտք գործել www.armed.am դոմենային տիրույթում գործող պորտալ:

5. ՍԱԿԱԳՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Ծառայությունների համար Բաժանորդը Օպերատորին վճարում է Լիազոր մարմնի հաստատած և Պայմանագրի կնքման պահին գործող Սակագների համաձայն, որոնց Բաժանորդը ծանոթացվում է Պայմանագրի կնքման ժամանակ: Բաժանորդի անունից Պայմանագիրը ստորագրելու իրավասությամբ օժտված ներկայացուցիչը Պայմանագիրը ստորագրելով հավաստում է, որ Բաժանորդը ծանոթացել է գործող Սակագներին: Սակագները հրապարակվում են www.armed.am ինտերնետային կայքում:
5.2 Բաժանորդը տեղեկացված է և ընդունում է, որ Կոնցեսիայի պայմանագրի դրույթների համաձայն, Լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարգով և ժամկետներում Օպերատորը Սակագների փոփոխության կամ ծառայությունների նոր տեսակներ և դրանց համապատասխան Սակագներ սահմանելու դեպքում Բաժանորդին էլեկտրոնային փոստի միջոցով կծանուցի այդ փոփոխությունների մասին դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ: Նման փոփոխությունների վերաբերյալ ծանուցումները կհրապարակվեն նաև www.armed.am ինտերնետային կայքում:
5.3 Ծառայությունների համար Բաժանորդին ներկայացված հաշիվները ենթակա են վճարման մինչև Ծառայությունների մատուցման ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրացուցային օրը՝ Օպերատորի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով: Ընդ որում, հաշիվը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում այն չվիճարկելու դեպքում հաշիվը համարվում է Բաժանորդի կողմից ընդունված:

6. ԲԱԺԱՆՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Ծառայությունների համար վճարումը Պայմանագրի 5.3 ենթակետով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով ուշացած յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև վճարման պարտավորության ամբողջական կատարումը:

6.2 Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի կողմից Պայմանագրի 5.3 ենթակետով սահմանված վճարման ժամկետն ավելի քան 45 (քառասունհինգ) օր ուշացնելու դեպքում կասեցնել Բաժանորդի համար Ծրագրային ապահովման սպասարկումը և սահմանափակել Համակարգ մուտքի հնարավորությունը՝ մինչև վճարման պարտավորության, այդ թվում՝ Պայմանագրի 6.1 ենթակետով սահմանված տույժի վճարման պարտավորության, կատարումը: Բաժանորդի համար Ծրագրային ապահովման սպասարկումը և Համակարգ մուտքի հնարավորությունը վերականգնվում են վճարման պարտավորությունն ամբողջությամբ կատարելուց (Օպերատորի կողմից պարտքի գումարն ստանալուց) հետո եռօրյա ժամկետում:

6.3 Բաժանորդի Օգտագործողի կամ Բաժանորդի անձնակազմի ցանկացած այլ ներկայացուցչի կողմից Ծրագրային ապահովում՝ Պայմանագրի և ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող կամ անօրինական մուտքի կամ Շահառուների անձնական տվյալների անօրինական օգտագործման հետևանքով Օպերատորին կամ երրորդ անձանց հասցված վնասի համար Բաժանորդը կրում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Բաժանորդը պարտավորվում է Ծրագրային ապահովման օգտագործման արդյունքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալները չբացահայտել երրորդ անձանց և անձնական տվյալները օգտագործել բացառապես Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված նպատակներով՝ Պայմանագրի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Բաժանորդը պարտավորվում է իր Օգտագործողներին պարտավորեցնել կատարել անձնական տվյալների գաղտնիության պահպանման՝ սույն ենթակետով սահմանված պահանջները:

7.2 Բաժանորդը և Համակարգում համապատասխան դեր ունեցող Օգտագործողը պարտավոր են, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ծրագրային ապահովման միջավայրում էլեկտրոնային կամ թղթային եղանակով ձեռք բերել Շահառուի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը՝ մինչև տվյալ Շահառուի անձնական տվյալների (առողջության պատմության) դարան մուտք գործելը: Ընդ որում, Ծրագրային ապահովման միջավայրից դուրս ձեռք բերված՝ Շահառուի թղթային համաձայնության տրամադրման ապացույցի բեռը կրում է Բաժանորդը:

7.3 Կողմերը պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր ողջամիտ քայլերը Ծրագրային ապահովման օգտագործման արդյունքում հավաքված անձնական տվյալների պաշտպանության համար: Օպերատորը ծրագրային մակարդակով իրականացնում և էլեկտրոնային եղանակով վարում է Օգտագործողների կողմից ցանկացած Շահառուի անձնական տվյալների (առողջության պատմության) դարան մուտք գործելու դեպքերի գրանցամատյան, որը հասանելի է տվյալ Շահառուին՝ իր իսկ անձնական էջ մուտք լինելու դեպքում:

7.4 Բաժանորդը, Բաժանորդի Օգտագործողը կամ այլ ներկայացուցիչը Ծրագրային ապահովման օգտագործման արդյունքում իրեն հասանելի կամ հայտնի դարձած՝ Համակարգում պահվող անձնական տվյալների անօրինական կամ ՀՀ օրենսդրության պահանջներին անհամապատասխան մշակման կամ օգտագործման համար կրում է ՀՀ վարչական և քրեական օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

7.5 Բաժանորդը տեղեկացված է, որ Ծառայությունների մատուցման կասեցման կամ Պայմանագրի դադարման դեպքում Օպերատորը այդ մասին հաղորդում է Լիազոր մարմնին:

8. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

8.1 Սույն պայմանագրով Բաժանորդին տրվում է Պայմանագրով սահմանված նպատակներով և պայմաններով Ծրագրային ապահովումն օգտագործելու իրավունք՝ Բաժանորդի օգտագործողների համար Ծրագրային ապահովման անհրաժեշտ քանակի մուտքային հնարավորություններ տրամադրելով:
8.2 Սույն պայմանագրով Բաժանորդին և Օգտագործողներին չի փոխանցվում Ծրագրային ապահովման նկատմամբ մտավոր սեփականության ոչ մի իրավունք:
8.3 Բաժանորդը և Օգտագործողներն իրավունք չունեն Ծրագրային ապահովումը կամ դրա որևէ տարր կրկնօրինակել, բազմացնել, վերամշակել, ձևափոխել, մշակել ածանցյալ ծրագրեր կամ հավելվածներ կամ Ծրագրային ապահովումն օգտագործել որևէ այլ՝ չարտոնված եղանակով:

9. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Օպերատորը Ծառայությունները մատուցում է Պայմանագրին, Կոնցեսիայի պայմանագրին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, պատշաճ որակով՝ գործադրելով Օպերատորի լավագույն կարողությունները:
9.2 Ծրագրային ապահովման թերությունները վերացվում են և Ծրագրային ապահովման անխափան աշխատանքն ապահովվում է Կոնցեսիայի պայմանագրով սահմանված և Լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարգով և ժամկետներում:
9.3 Ծրագրային ապահովման անխափան աշխատանքի համար Օպերատորը պատասխանատու է Լիազոր մարմնի առջև:
9.4 Օպերատորը Բաժանորդի և երրորդ անձանց առջև պատասխանատվություն չի կրում Ծրագրային ապահովման, Ծրագրային ապահովման միջոցով ստացված անձնական տվյալների կամ այլ տեղեկատվության՝ Բաժանորդի կամ երրորդ անձանց կողմից անօրինական բացահայտման կամ օգտագործման, Բաժանորդի կամ երրորդ անձանց կողմից Ծրագրային ապահովման անօրինական մուտքի կամ Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող օգտագործման հետևանքով Բաժանորդի կամ երրորդ անձանց կրած որևէ վնասի, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ բաց թողնված օգուտի, բարի համբավի կորստի, որևէ գործողությունից բխող ծախսերի համար:
9.5 Պայմանագրի կնքումից հետո Բաժանորդն իր օգտագործողների ադմինիստրատորի տվյալները կարող է փոխել կամ նրա իրավասությունները դադարեցնել՝ Օպերատորին ուղարկելով համապատասխան դիմում: Բաժանորդը կարող է ունենալ օգտագործողների առավելագույնը 2 (երկու) ադմինիստրատոր:
9.6 Բաժանորդը պարտավոր է ապահովել Համակարգի օգտագործման անվտանգության նվազագույն պարտադիր պահանջները և դրանց կատարումն իր Օգտագործողների կողմից: Համակարգի օգտագործման անվտանգության նվազագույն պարտադիր պահանջները սահմանված են Հավելված 2-ով:
9.7 Բաժանորդը պատասխանատու է Համակարգում իր օգտագործողների ադմինիստրատորի բոլոր գործողությունների համար, ինչպես նաև իր Օգտագործողների մուտքի վավերապայմանների օգտագործմամբ կատարված, փոփոխված և չեղարկված գրառումների, դրանցում զետեղված տվյալների ճշտության և դրանց հիման վրա կատարված գործողությունների արդյունքում Շահառուների կամ այլ անձանց կրած վնասների համար:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
10.2Բաժանորդը կարող է լուծել Պայմանագիրը՝ առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր ծանուցելով Օպերատորին:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ

11.1 Սույն Պայմանագրի կատարումը կարող է միակողմանիորեն կասեցվել Օպերատորի կողմից.

11.1.1 Պայմանագրով 6. 2 ենթակետով սահմանված դեպքում,

11.1.2 Բաժանորդի կողմից Պայմանագրի 7-րդ կետով սահմանված՝ անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվության գաղտնիության պահպանման կարգի խախտման մասին ողջամիտ կասկածի առկայության դեպքում, եթե ենթադրյալ խախտումը կարող է բացասական ազդեցություն ունենալ Համակարգի հուսալիության վրա, կասկածի տակ դնել Օպերատորի կողմից անձնական տվյալների պաշտպանության միջոցառումների արդյունավետությունը կամ վնաս հասցնել որևէ Շահառուի՝ մինչև խախտման հերքումը կամ վերացումը: Անձնական տվյալների պաշտպանության կարգի ենթադրյալ խախտման մասին Օպերատորը ծանուցում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին: Օպերատորն առաջնորդվում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշումով.

11.1.3 Բաժանորդի Օգտագործողի կամ անձնակազմի որևէ այլ անդամի կողմից Ծրագրային ապահովում անօրինական մուտք գործելու կամ Պայմանագրի պայմաններին անհամապատասխան օգտագործելու դեպքում՝ մինչև խախտման վերացումը.

11.1.4 անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշման կամ դատական ակտի հիման վրա:

12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1 Օպերատորը իրավասու է Պայմանագրում, այդ թվում նաև www.armed.am ինտերնետային կայքում զետեղված Սակագներում, կատարել փոփոխություններ՝ առնվազն մեկ ամիս առաջ ծանուցելով Բաժանորդին, բացառությամբ Բաժանորդի համար բարենպաստ փոփոխությունների և իրավասու մարմինների կողմից Համակարգի շահագործման կարգի փոփոխմամբ պայմանավորված հրատապ փոփոխությունների: Ծանուցման մեջ նշված ժամկետի ավարտին Պայմանագիրը համարվում է համապատասխանաբար փոփոխված:

12.2 Պայմանագիրը կազմված է երկու թղթային բնօրինակով կամ մեկ միասնական էլեկտրոնային փաստաթղթով:

12.3 Պայմանագրի հետ կապված բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային փաստաթղթով կամ թղթային նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով:

12.4 Պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

12.5 Պայմանագրի հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցային ճանապարհով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՕՊԵՐԱՏՈՐ՝

Digitally signed by MANUKYAN AVET
3707760391
Date: 2020.01.08 21:54:36 AMT

Տնօրեն

Ավետ Մանուկյան

ԲԱԺԱՆՈՐԴ՝

KOCHARYAN LUSINE 6509770407

Digitally signed by KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Date: 2019.12.30 14:12:44 +04'00'

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (WWW.ARMED.AM) ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №_____

_____

օր/ամիս/տարի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ծառայությունների նկարագրություն, Համակարգին միանալու հնարավորության տրամադրում և սպասարկում

1.1. Պայմանագրի հիմնական նպատակն է՝ Բաժանորդին Համակարգին միանալու և այն Պայմանագրում նկարագրված նպատակներով, պայմաններով և կարգով օգտագործելու հնարավորության տրամադրումը: Ծառայությունները մատուցելիս հաշվի են առնվում հետևյալ պայմանները.

- Օպերատորը Բաժանորդի համար բացում և վարում է Համակարգում՝ www.armed.am դոմենային տիրույթում հասանելի, միայն Բաժանորդի ադմինիստրատորի և վերջինիս կողմից գրանցված Օգտագործողների համար հասանելի առանձնացված ինտերնետային միջավայր և տրամադրում է անհրաժեշտ վավերապայմաններ հատկացված ինտերնետային միջավայրում Բաժանորդի բոլոր Օգտագործողների համար անձնական գրասեղաններ բացելու, վարելու և կառավարելու համար:
- Օպերատորը Ծառայությունները մատուցում է ՀՀ կառավարության և Լիազոր մարմնի որոշումների, հրամանների և այլ կիրառելի իրավական ակտերի հիման վրա, որոնք կարող են ընդունվել նաև Պայմանագիրը կնքելուց հետո:
- Համակարգից օգտվելուն աջակցելու համար, ինչպես նաև Ծառայությունների հետ կապված հարցեր և խնդիրներ ունենալու դեպքում Բաժանորդը կարող է կապվել Օպերատորի սպասարկման կենտրոնի հետ:
- Բաժանորդը տեղեկացված է, որ Ծառայությունների ամբողջական ծավալով մատուցումը կատարվում է Օպերատորի և Լիազոր մարմնի միջև ձեռք բերված համաձայնությամբ սահմանված ժամանակացույցի և կարգի համաձայն, իսկ Բաժանորդը դրանք պետք է կիրառի Լիազոր մարմնի իրավական ակտերի և ցուցումների համաձայն:

1.2. Օպերատորը ապահովում է Օգտագործողների համար Համակարգին միանալու և օգտագործելու հնարավորություն և մատուցում Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ:

1.3. Համակարգի նկարագիրը և Օգտագործողների համար հասանելի ծրագրային գործիքակազմը հրապարակվում են www.armed.am ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար թարմացվել՝ Համակարգի շարունակական բարելավմանը զուգահեռ:

2. Ծրագրային գործիքակազմի շարունակական բարելավում

2.1 Օպերատորը շարունակաբար միջոցներ է ձեռնարկում ծրագրային գործիքակազմը բարելավելու համար, որը ներառում է հետևյալը՝

- իր կամ երրորդ անձ հանդիսացող մշակողներից՝ հեղինակներից ստացված ծրագրային թարմացումների ներդրում,
- Համակարգի արդյունավետությունը բարձրացնող՝ Ծրագրային ապահովման ֆունկցիոնալ լրամշակումների ինտեգրում,
- իր կամ երրորդ անձանց միջոցով նոր ծրագրային տարրերի ներդրում:

3. Բաժանորդի և Օգտագործողների սպասարկում

3.1. Օպերատորը Բաժանորդին և Օգտագործողներին սպասարկում է՝ համաձայն սպասարկման իր ընթացակարգի: Օպերատորը պարտավորվում է Բաժանորդի և Օգտագործողների սպասարկման նպատակով ունենալ ամեն օր 24 ժամ աշխատող սպասարկման կենտրոն, որը պետք է Համակարգից օգտվելիս Օգտագործողներին օժանդակի, այդ թվում՝ հեռախոսային և էլեկտրոնային կապի միջոցներով, պատասխանի նրանց գրավոր և բանավոր հարցերին, բողոքներին և առաջարկություններին:

3.2. Հեռախոսային սպասարկման կենտրոնը.

1. ունի Օգտագործողների սպասարկման համար անհրաժեշտ և բավարար քանակով մասնագետներ այնպես, որ զանգերի սպասման ժամանակը 70% դեպքերում չգերազանցի 15 (տասնհինգ) րոպեն՝ աշխատանքային օրերին ժամը 9:00-ից մինչև 18:00, 25 (քսանհինգ) րոպեն՝ ոչ աշխատանքային օրերին և աշխատանքային օրերի ժամը 18:00-ից մինչև 09:00-ը.
2. ունի Օգտագործողների զանգերի հաշվառման և հետագայում լրացուցիչ ուսումնասիրության և թարմացման հնարավորություն տվող էլեկտրոնային համակարգ, որում արձանագրվում են առնվազն հետևյալ տվյալները՝
   - զանգի ստացման օր, ամիս, տարի,
   - զանգը կատարած Օգտագործողի անուն, ազգանուն,
   - Բաժանորդի անվանում, որի Օգտագործողը կատարել է զանգը
   - զանգի հակիրճ բովանդակությունը
   - զանգի առնչությամբ ձեռնարկված միջոցառումները.
3. Ունի ստացված զանգերի փոխանցման հնարավորություն՝ ըստ խնդրի կատեգորիայ.
4. Զանգերը ձայնագրվում և պահպանվում են առնվազն 6 (վեց) ամիս:

3.3. Սպասարկման կենտրոնը նաև արձագանքում և սպասարկում է իրենց անձնական էջը մուտք գործող այն Շահառուների դիմումները, որոնք դժվարություն ունեն անձնական էջը մուտք գործելու հետ կապված: Շահառուների անձնական էջում կատարված գրառումների կամ տվյալների հետ կապված Օպերատորը իրավունք չունի աջակցություն ցուցաբերել կամ խորհուրդներ տալ, փոխարենը նրանց առաջարկում է դիմել համապատասխան Բաժանորդին:

4. Օգտագործողների ուսուցում

4.1 Օպերատորը Բաժանորդի Օգտագործողների համար ապահովում է Ծրագրային ապահովումից օգտվելու հետևյալ դասընթացները.

- առնվազն մեկական դասընթաց և վերապատրաստում Բաժանորդի առնվազն մեկ ներկայացուցչի համար այնպես, որ դասընթացի կամ վերապատրաստման արդյունքում վերջինս

գիտելիքի փոխանակման սկզբունքով Բաժանորդի Օգտագործողների համար ինքը կազմակերպի դասընթացներ և վերապատրաստումներ (TOT),

- Բաժանորդի Օգտագործողների համար դասընթացներ էլեկտրոնային եղանակով (տեսագրությունների, էլեկտրոնային ձեռնարկների, առցանց սեմինարների և/կամ այլ մեթոդներով):

4.4 Դասընթացների և վերապատրաստումների ժամանակացույցի մասին Բաժանորդը նախապես ծանուցվում է էլեկտրոնային փոստով կամ որևէ այլ եղանակով:

5. Ծրագրային ապահովման հասանելիություն և պատահարներ

5.1 Օպերատորը պարտավորվում է ապահովել աշխատանքային ժամերին Ծրագրային ապահովման ամսական 99 % հասանելիություն:

5.2 Ծրագրային ապահովման սպասարկման ընթացքում պատահարները բաժանվում են հետևյալ տեսակների.

- **Կրիտիկական Պատահար**

Կրիտիկական Պատահար է համարվում այնպիսի թերությունը կամ խափանումը, որը խոչընդոտում է Ծրագրային ապահովման բնականոն օգտագործումը 100-ից ավել օգտագործողների համար՝ Սպասարկման տարածքում:

- **Էական Պատահար**

Էական Պատահար է համարվում Ծրագրային ապահովման այնպիսի թերությունը կամ խափանումը, որը խոչընդոտում է Ծրագրային ապահովման բնականոն օգտագործումը ոչ ավել, քան 100 օգտագործողի համար՝ Սպասարկման տարածքում:

- **Փոքր Պատահար**

Փոքր Պատահար է համարվում Ծրագրային ապահովման բնականոն օգտագործմանը չխոչընդոտող այն թերությունը կամ խափանումը, որը բացասաբար է ազդում Ծրագրային ապահովման փոքր բաժնի կամ ձևավորման տարրերի վրա, որոնք այնքան էլ մեծ կարևորություն չունեն, և որի արդյունքում չի արգելակվում Ծրագրային Ապահովման բնականոն աշխատանքը:

6. Պատահարի վերականգնման ժամանակը

6.2 Վերականգնման ժամանակն այն ժամանակահատվածն է, որն օգտագործվել է Պատահարը լուծելու համար՝ հաշվարկված Օպերատորին Պատահարի վերաբերյալ տեղեկացնելու պահից մինչև Օպերատորի կողմից վերջնական վերականգնումը: Վերականգնումը համարվում է վերջնական, երբ Պատահարը վերացված է և Ծրագրային ապահովման գործառույթներն ամբողջովին վերականգնված են:

7. Վերականգնման թիրախային ժամկետներ

7.1 Պայմանագրի շրջանակներում գործում են Պատահարների վերացման և վերականգնման հետևյալ ժամկետները՝

- <u>Կրիտիկական Պատահարի համար</u>՝ 1 (մեկ) աշխատանքային օրվան համապատասխան աշխատանքային ժամեր,

- Էական Պատահարի համար՝ 5 (հինգ) աշխատանքային օրվան համապատասխան աշխատանքային ժամեր
- Փոքր Պատահարի համար՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվան համապատասխան աշխատանքային ժամեր

8. Խնդիրների մասին տեղեկացման կարգ

8.1 Պատահարի մասին Բաժանորդի Օգտագործողը կամ պատասխանատու անձը պետք է հեռախոսազանգով կամ էլեկտրոնային նամակով տեղեկացնի Օպերատորի սպասարկման կենտրոնին: Էլեկտրոնային նամակի ստացումը սպասարկման կենտրոնը հավաստում է պատասխան նամակով:

8.2 Պատահարների վերականգնման վերաբերյալ Օպերատորը զանգով կամ էլեկտրոնային նամակով տեղեկացնում է Բաժանորդի Օգտագործողին կամ պատասխանատու անձին:

9. Օպերատորի պատասխանատվության սահմանները

9.1 Օպերատորը պատասխանատվություն է կրում անմիջապես Լիազոր մարմնի առջև իր մեղքով Պատահարի վերականգնման ժամկետը խախտելու համար:

9.3 Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծրագրային ապահովման այնպիսի թերությունների և խափանումների՝ վերականգնման ժամկետում չվերականգնման համար, որոնք թեև սույն հավելվածով սահմանված Պատահարի հասկացությանը համապատասխանում են, սակայն որոնց վերացման հնարավորությունը Օպերատորի իրավասության և վերահսկողության ներքո չէ և կախված է այն երրորդ անձանցից, որոնք մշակել են Ծրագրային ապահովումը կամ դրա համապատասխան տարրը: Նման դեպքերում Օպերատորը ձեռնարկում է իրենից կախված ողջամիտ քայլերը՝ թերությունը կամ խափանումը հնարավորինս սեղմ ժամկետում վերացնելու համար:

ՕՊԵՐԱՏՈՐ՝

MANUKYAN
AVET
3707760391

Տնօրեն

Ավետ Մանուկյան

ԲԱԺԱՆՈՐԴ՝

KOCHARYAN
LUSINE
6509770407

Digitally signed by KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Date: 2019.12.30 14:13:00 +04'00'

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (WWW.ARMED.AM) ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №_____

_____

օր/ամիս/տարի

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Համակարգին միացված համակարգչային սարքավորումները պետք է տեղակայված լինեն Բաժանորդի՝ լիցենզավորված գործունեության իրականացման (հիվանդանոց, ապահովագրական ընկերության գրասենյակ և այլն) տարածքում կամ, անհրաժեշտության դեպքում, դրանից դուրս՝ Բաժանորդի լիազորված օգտագործողի անմիջական տիրապետության տակ:
2. Համակարգին միացված համակարգչային սարքավորումների տեղակայման տարածքը պետք է վերահսկվի՝ հնարավորինս բացառելու համար կողմնակի անձանց մուտքը տարածք և հասանելիությունը Ծրագրային ապահովմանը:
3. Համակարգից տպված փաստաթղթերը պետք է պահպանվեն փակվող պահարանում կամ այլ ապահով վայրում՝ նվազեցնելու դրանցում պարունակվող անձնական և գաղտնի այլ տվյալների արտահոսքը:
4. Համակարգին միացված համակարգչային սարքավորումները պետք է ապահովված լինեն անվտանգության վերջին թարմացումներով և դրանք կանոնավոր կատարելու հնարավորությամբ:
5. Համակարգին միացված համակարգչային սարքավորումներում պետք է տեղադրված լինի և կանոնավոր թարմացվի վիրուսների և այլ վնասակար ծրագրերի հայտնաբերման ծրագիր:
6. Համակարգին միացված համակարգչային սարքավորումները պետք է միացված լինեն համացանցի միայն այն միջոցներին (կայքեր, ծրագրեր և այլն), որոնք անհրաժեշտ են Ծրագրային ապահովումն օգտագործելու համար:
7. Համակարգին միացված համակարգչային սարքավորումները պետք է պաշտպանված լինեն գաղտնաբառով, որի բարդության աստիճանը պետք է համապատասխանի լավագույն չափանիշներին՝ երկարությունը լինի ոչ պակաս 10 նիշից, պարունակի միաժամանակ մեծատառեր և փոքրատառեր, թվեր և կետադրական նշաններ:
8. Համակարգին միացված համակարգչային սարքավորման գաղտնաբառը պետք է նվազագույնը 5 ամիսը մեկ անգամ փոխվի: Գաղտնաբառի փոփոխությունը պետք է, հնարավորության դեպքում, պարտադրվի օպերացիոն համակարգի կողմից:
9. Համակարգին միացված համակարգչային սարքավորումը պետք է 10 րոպե պասիվ (չօգտագործման) ժամանակահատվածից հետո ավտոմատ բլոկավորվի՝ միանալու համար պահանջելով գաղտնաբառի մուտքագրում:

10. Համակարգում նոր Օգտագործողի գրանցումը թույլատրվում է միայն կազմակերպության տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի թույլտվությամբ:
11. Համակարգում նոր Օգտագործող գրանցելու համար Բաժանորդի օգտագործողների ադմինիստրատորը դիմում է կազմակերպության տնօրենին կամ նրա կողմից լիազորված անձին: Թույլտվություն ստանալուց հետո ադմինիստրատորը Համակարգում ստեղծում է նոր Օգտագործող՝ դիմումում նշված իրավասություններով (դերով):
12. Օգտագործողը պարտավոր է իրականացնել իր նույնականացման քարտի, PIN/PUK ծածկագրերի, մուտքային անվան և գաղտնաբառի պատշաճ պաշտպանություն, դրանք չփոխանցել երրորդ անձանց և կանխել դրանց չարտոնված օգտագործումը որևէ երրորդ անձի կողմից:
13. Օգտագործողը պարտավոր է Համակարգին միացված համակարգչային սարքավորումը հասանելի չդարձնել երրորդ անձանց, եթե սարքի վրա բաց է իր անձնական էջը:
14. Օգտագործողի նույնականացման քարտի, ծածկագրերի կամ մուտքային անվան և գաղտնաբառի օգտագործմամբ կատարված բոլոր գործողությունները համարվում են կատարված Օգտագործողի կողմից:
15. Համակարգի օգտագործողը նախքան Համակարգում որևէ գործողություն կատարելը պարտավոր է անցնել համապատասխան դասընթաց՝ կազմակերպված կա՛մ Օպերատորի, կա՛մ Լիազոր մարմնի, կա՛մ վերջիններիս վերապատրաստած դասընթացավարի կողմից:

ՕՊԵՐԱՏՈՐ՝

MANUKYAN
AVET
3707760391

Տնօրեն

Ավետ Մանուկյան

ԲԱԺԱՆՈՐԴ՝

KOCHARYAN
LUSINE
6509770407

Digitally signed by KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Date: 2019.12.30 14:13:11 +04'00'

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ (WWW.ARMED.AM) ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №_____

_____

օր/ամիս/տարի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ

Պայմանագրի համաձայն՝ համացանցի www.armed.am դոմենային տիրույթում գործող պորտալի միջոցով ՀՀ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգին միանալու տեխնիկական հնարավորությունը տրամադրվում և Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունները Բաժանորդին մատուցվում են հետևյալ հասցեներում.

№	Հասցե
1.	
2.	
3.	
4.	
5.	

Սույն հավելվածն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և փոխարինում է նախկինում կնքված հավելված 3-ին (եթե այդպիսին կա):

ՕՊԵՐԱՏՈՐ՝

MANUKYAN AVET 3707760391

_____

Տնօրեն

Ավետ Մանուկյան

ԲԱԺԱՆՈՐԴ՝

KOCHARYAN LUSINE 6509770407

Digitally signed by KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Date: 2019.12.30 14:13:19 +04'00'

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 01/2019

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ՈՐՈՇԱԿԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹ, ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ ԵՎ ԱՅԴ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿՈՆՑԵՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Երևան **«18» հոկտեմբերի 2019թ.**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝
ի դեմս առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի, և

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝
ի դեմս տնօրեն Լեոնիդ Ավետիսյանի, և

«Sylex SARL» ընկերությունից (Շվեյցարիայի Համադաշնություն) և «Մեյսիս Ապահով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (Հայաստանի Հանրապետություն) բաղկացած համատեղ ձեռնարկությունը (այսուհետ՝ Հայտատու)՝
ի դեմս լիազորված անձ Արման Մելքոնյանի, և

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Օպերատոր)՝ ի դեմս տնօրեն Ավետ Մանուկյանի,

այսուհետ միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

Հաշվի առնելով, որ

1. «Էլեկտրոնային առողջապահության համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու համար անցկացված մրցույթի արդյունքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20 հուլիսի 2017 թվականի N 866-Ն որոշման պահանջների համաձայն «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է էլեկտրոնային առողջապահության համակարգի (armed.am) կառավարման միասնական օպերատոր, իսկ ՀՀ առողջապահության նախարարությունը ճանաչվել է Կոնցեդենտի անունից հանդես եկող Լիազոր մարմին.
2. Անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատուցվող ծառայությունների սակագները՝ միաժամանակ վերանայելով մատուցվող ծառայությունների ծավալը, ֆինանսավորման մեխանիզմները և ծավալները, որի նպատակով

Լիազոր մարմինը Օպերատորին առաջարկել է նվազեցնել մատուցվող ծառայությունների սակագները (գրություն թիվ ՎՀ/3394-19 07"03 19 և գրություն թիվ 29.05.19 ԱՍ/8581-19)

3. Լիազոր մարմնի առաջարկի հիման վրա Օպերատորի և Լիազոր մարմնի ներկայացուցիչների միջև կայացել են սակագների նվազեցման շուրջ բանակցություններ.

և առաջնորդվելով Կոնցեսիայի պայմանագրի 13-րդ հոդվածի 13.2 կետով՝ Կողմերը սույնով համաձայնվում են Կոնցեսիայի պայմանագրի

1) ԸՊ 9.3 կետում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Համակարգին միացված բաժանորդներից ըստ սահմանված սակագների գանձված գումարներից տարեկան 333,000,000 (երեք հարյուր երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ, գումարը գերազանցող մասը Օպերատորը տնօրինում է Լիազոր մարմնի համաձայնությամբ, բացառությամբ ավելացված արժեքի հարկի և շահութահարկի մասով պետական բյուջե վճարումների, որոնց կատարման համար Լիազոր մարմնի համաձայնություն չի պահանջվում:»"

2) հավելված 10-ը (հայտի գնի ձև) փոխարինել սույն համաձայնագրին կցված նոր խմբագրությամբ շարադրված հավելված 10-ով, որով սահմանված սակագներն ուժի մեջ կմտնեն 2020 թվականի հունվարի 1-ից:

Սույն համաձայնագիրը կնքվում է 4 (չորս) օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար:

Սույն համաձայնագիրը կցվում է Կոնցեսիայի պայմանագրին՝ որպես դրա անբաժանելի մասը և գործում է Կոնցեսիայի պայմանագրի ժամկետով:

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

Արսեն Թորոսյան

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-Ի տնօրեն

Լեոնիդ Ավետիսյանի

ՀԱՅՏԱՏՈՒ՝

«Sylex SARL» ընկերությունից (Շվեյցարիայի Համադաշնություն) և «Մեյսիս Ապահով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (Հայաստանի Հանրապետություն) բաղկացած համատեղ ձեռնարկության լիազորված անձ

Արման Մելքոնյան

ՕՊԵՐԱՏՈՐ՝

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-Ի տնօրեն

Ավետ Մանուկյան

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարության,
«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ»
փակ բաժնետիրական ընկերության,
«Sylex SARL» ընկերությունից և «Մեյսիս Ապահով» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությունից բաղկացած համատեղ ձեռնարկության
և
«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» փակ բաժնետիրական
ընկերության
միջև կնքված Համաձայնագիր թիվ 01/2019

«ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀԱՅՏԻ ԳՆԻ ՁԵՎ

Պայմանագրի կողմերը արձանագրում են, որ «SYLEX Sarl» և «Մեյսիս Ապահով» ՍՊԸ-ի համատեղ ձեռնարկությունը առաջարկել է Համակարգին միանալու և սպասարկվելու համար որոշակի Բազիսային սակագներ՝ ի պատասխան ՀՀ կառավարության կողմից հայտարարված «Էլեկտրոնային առողջապահություն տեղեկատվական միասնական համակարգի օպերատոր հիմնադրելու եղանակով որոշակի ծրագրային փաթեթ, շարժական գույք և այդ տեղեկատվական համակարգի սպասարկման իրավունքներ փոխանցելու նպատակով կոնցեսիայի պայմանագիր կնքելու իրավունքի շնորհման» գնման ընթացակարգին մասնակցելու համար Հրավերի:

Կողմերը հաստատում են, որ Բազիսային սակագները հիմնված են եղել Հրավերի պայմանների վրա:

Կողմերը հաստատում են, որ բանակցությունների արդյունքում Լիազոր մարմնի և Օպերատորի միջև 2017 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված թիվ 01/2017 համաձայնագրի համաձայն՝ Բազիսային սակագները էապես նվազեցվել են և կիրառման համար սահմանվել են նոր՝ նվազեցված Բազիսային սակագներ: Ընդ որում, կողմերը բանակցությունների արդյունքում սահմանել են նաև նոր տեսակի այնպիսի սակագներ, որոնց վերաբերյալ թեև հիշատակում չի եղել Հրավերում, սակայն դրանց սահմանման անհրաժեշտությունը ծագել է հետագայում՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո:

Կողմերը հաստատում են, որ Լիազոր մարմնի առաջարկությամբ և բանակցությունների արդյունքում սակագներն էապես նվազեցվել են նաև 2019 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված թիվ 01/2019 համաձայնագրի համաձայն՝ 2020 թվականի Պայմանագրային տարվանից սկսած կիրառման համար սահմանելով նոր սակագներ: Ընդ որում, Կողմերը սահմանել են նաև սակագների հաշվարկման նոր կարգ, որը թեև տարբերվում է Հրավերի պայմաններից, սակայն դրա սահմանման անհրաժեշտությունը ծագել է հետագայում՝ Պայմանագրի գործողության ընթացքում:

Կողմերը սահմանում են, որ մասնավոր հատվածում գործող Բաժանորդների համար մինչև ՀՀ օրենսդրության համաձայն Օպերատորի հետ պայմանագրի առկայությամբ

գործունեության պահանջը կամ նախապայմանը ուժի մեջ մտնելը համակարգին միացման և սպասարկման պայմանագրերը կարող են կնքվել Բաժանորդների ցանկությամբ:

Կողմերը հաստատում են, որ Համակարգին միացված բաժանորդներից 2020 թվականի հունվարի 1-ից սկսած Օպերատորի կողմից պետք է գանձվեն հետևյալ վճարները՝

	Հաստատության տեսակ	**Սակագնի հաշվարկման հիմք**	**Սակագներ** *(առանց ԱԱՀ, ՀՀ դրամ)*
1.	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող	յուրաքանչյուր ոչ ստացիոնար և ցերեկային ստացիոնար այցի համար*	**50**
		յուրաքանչյուր ստացիոնար այցի համար**	**500**
2.	Ամբուլատորիա, պոլիկլինիկա, ԱԱՊ ծառայություն մատուցող***	յուրաքանչյուր կցագրված բնակչի համար, ամսական	**0.84**
3.	Ապահովագրական ընկերություն	սոցիալական փաթեթի շրջանակներում բժշկական ապահովագրություն ունեցող յուրաքանչյուր անձի էլեկտրոնային հաշվառման և սպասարկման համար, ամսական	**45.84**
4.	Պետական առողջապահական գործակալություն	Ամսական	**3,750,000**

* **Ծանուցում՝** ներառում է բոլոր տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ոչ ստացիոնար և ցերեկային ստացիոնար այցերը:

** **Ծանուցում՝** ներառում է բոլոր տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ստացիոնար այցերը (բացառությամբ ցերեկային ստացիոնար այցերը)՝ ներառյալ առողջարանների այցերը:

*** **Ծանուցում՝** Ամբուլատորիաները և պոլիկլինիկաները վճարում են ինչպես կցագրված բնակչության համար (ամսական վճարներ), այնպես էլ պետական պատվերի կամ սոցիալական փաթեթի շրջանակներից դուրս սպասարկված այցերի համար՝ ըստ սահմանված սակագների: Այն բժշկական կենտրոնները և բժշկական միավորումները, որոնք ունեն կցագրված բնակչություն, վճարում են ինչպես կցագրված բնակչության համար (ամսական վճարներ), այնպես էլ այն այցերի համար, որոնք չենք սպասարկվել բժշկական կենտրոնի կամ

միավորման կազմում գտնվող պոլիկլինիկայում՝ պետական պատվերի կամ սոցիալական փաթեթի շրջանակներում՝ ըստ սահմանված սակագների:
Սակագների հաշվարկման նպատակով կցագրված բնակչություն համարվում է առողջության առաջնային պահպանում (ԱԱՊ) տիպով կցագրված բնակչությունը:
Բժշկական կենտրոնի կազմի մեջ չմտնող և կցագրված բնակչություն չունեցող առանձին գործող ամբուլատորիաները և պոլիկլինիկաները վճարում են 12,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), բացառությամբ 10,000,000 ՀՀ դրամը գերազանցող միջին ամսական շրջանառություն ունեցող ամբուլատորիաների և պոլիկլինիկաների, որոնք վճարում են 62,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

Արսեն Թորոսյան

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

Լեոնիդ Ավետիսյանի

ՀԱՅՏԱՏՈՒ՝

«Sylex SARL» ընկերությունից (Շվեյցարիայի Համադաշնություն) և «Մեյսիս Ապահով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (Հայաստանի Հանրապետություն) բաղկացած համատեղ ձեռնարկության լիազորված անձ

Արման Մելքոնյան

ՕՊԵՐԱՏՈՐ՝

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

Ավետ Մանուկյան